ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 239-Ա/3 «26» Նոյեմբերի 2024թ.

«ԲԵՍՏ 84» ՍՊԸ- ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/97» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 14-ի որոշումը առ այն, որ **«ԲԵՍՏ 84»** ՍՊԸ-ի կողմից 2 և 6-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (ներկայացված հավելված 1 դիմում-հայտարարությունը լրացված է եղել թերի՝ բացակայել է մասնակցի փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ հավաստումը, ինչպես նաև հավելված 1.1 դիմում հայտարարությունը ստորագրված չէ եղել տնօրենի կողմից և բացակայել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորությունը այլ անձի վերապահված լինելու մասին փաստաթուղթը, նաև ներկայացված չեն եղել իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից չեն շտկվել և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«ԲԵՍՏ 84» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00530998, գործունեության հասցեն՝ ք Երևան Աթոյան անցդ. 2. 7, բն.17) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

11/26/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**